



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 06 2026թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 078 - 26

Նախաձեռնող՝

«ՌԻԶԳԱԶ» ՍՊԸ

Երևան, Գրիբոյեդովի շ. 3, բն. 30

Գործունեությունը՝

Ոչ մեքաղական օգտակար հանածոյի արդյունահանում  
Արարաբի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 078 - 26

«10» հունիսի 2026թ.

Արարատի մարզի Սիսի ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՌԻԶԳԱԶ» ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Ա» կատեգորիա/  
Գտնվելու վայրը՝ Արարատի մարզ, Մասիս համայնք

**Ներածական մաս.** Արարատի մարզի Սիսի ավազների հանքավայրից հայցվող տեղամասում «ՌԻԶԳԱԶ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո ըստ ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվում է հետագայում բացահանքի տարածքն օգտագործել ձկնաբուծական գործունեության նպատակով:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի՝ հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Սիսի ավազի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս բնակավայրի վարչական տարածքում, գյուղից 2,9 կմ հարավ-արևմուտք (ուղիղ գծով) և զբաղեցնում է մոտ 4.67 հա տարածք, Սևջուր գետի ձախափնյա մասում՝ գետից մոտ 300 մ հեռավորության վրա: Հայցվող տարածքը գտնվում է «Ռիչգազ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքով պատկանող 03-083-0120-0008 կադաստրային ծածկագրով, ջրային նպատակային նշանակության հողամասի սահմաններում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09112121-03-0075: Հանքավայրը Երևանից գտնվում է 20 կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Մասիս քաղաքը, Ռանչպար, Նորամարզ և Սիս բնակավայրերը: Վերջինս հանքավայրի հետ կապված է 2.5 կմ ասֆալտապատ և 2.0 կմ բարեկարգ գրունտային ավտոճանապարհով: Հանքավայրի ավազի պաշարները հաստատվել են ՏԿԵ նախարարի 29.11.2024թ. N2885-Ա հրամանով՝ հիմք ընդունելով ՏԿԵ նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2024թ. հոկտեմբերի 30-ի փորձագիտական եզրակացությունը: Հաշվեկշռային պաշարները 2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ կազմել են 132.3 հազ. խմ և բավարարում են «Ավազ շինարարական աշխատանքների համար» ԳՕՍ 8736-2014 պահանջներին և կարող են օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոններում, ասֆալտաբետոններում և



շինարարական շաղախներում, ինչպես նաև ճանապարհային և այլ տեսակի շինարարական աշխատանքներում:

Նախագծով նախատեսվում է՝ հանքավայրի ավազները արդյունահանել տարեկան 10000 խմ արտադրողականությամբ՝ կորզվող պաշար, աշխատանքային օրերի քանակը ընդունել 220 օր, բացահանքի ծառայման ժամկետը՝ 11 տարի, արդյունահանված ավազը տեղափոխել ավտոինքնաթափով, հանքավայրի մարվող պաշարները կազմում են 132.3 հազ. խմ, կորզվող պաշարները կազմում են 110.0 հազ. խմ: Բացահանքի վերջնական դիրքի պարամետրերն են՝ առավելագույն երկարություն՝ 252 մ, առավելագույն լայնությունը՝ 206 մ, հանքաստիճանի ամենամեծ խորությունը՝ 7.1 մ, աշխատանքային հանքաստիճանի թեքությունը՝ 40 աստիճան, բացահանքի վերջնական եզրագծում կողի թեքության անկյունը՝ 40 աստիճան, օտարման տարածքը՝ 4.67 հա: Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է ներքին լցակույտաառաջացում: Արդյունահանման աշխատանքների ավարտին բացահանքի տարածքի ռեկուլտիվացումը նախատեսված է իրականացնել ջրային ուղղությամբ՝ օգտագործել ձկնաբուծական գործունեության նպատակով՝ արդյունքում նախատեսվում է վերականգնել այդ տարածքում նախկինում գործած ձկնաբուծական գործունեություն:

Սիսի ավազների հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Սիս գյուղից 2,9 կմ հարավ-արևմուտք: Այն զբաղեցնում է 4.67 հա տարածք: Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնությունը՝ 40° 02'41" , արևելյան երկայնությունը՝ 44°20'46": Սիսի ավազի հանքավայրը ծագումնաբանորեն կապված է Արարատյան դաշտավայրի առաջին (ստորին) դարավանդի նստվածքային առաջացումների հետ: Այն ունի պարզ երկրաբանական կառուցվածք: Դեյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները հանքավայրի տարածքում ունեն համատարած տարածում և ծածկում են օգտակար հաստվածքի ավազներին: Ներկայացված են դրանք հիմնականում ավազակավերով՝ մանրաբեկորային նյութի չնչին խառնուրդով: Օգտակար հանածոյի ավազակուտակը ներկայացված է հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև մարմնի ձևով, որի հզորությունը հյուսիսային թևում նվազում է: Այն տատանվում է 1.0-4.0 մ սահմաններում, կազմելով միջինը հանքավայրի հաշվեկշռային պաշարներում՝ 2.83 մ: Ավազների կուտակը հետախուզման սահմաններում բնութագրվում է բավական կայուն ներքին կառուցվածքով, որում առանձին կավային շերտեր չեն հանդիպում: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դեյուվիալ-պրոլյուվիալ ավազակավային առաջացումները և Արարատյան դաշտավայրի առաջին դարավանդի վերին չորրորդականի ավազային ու կավավազային նստվածքները: Հանքավայրը գտնվում է 828-830 մ բացարձակ բարձրությունների վրա: Սիսի հանքավայրի ավազների որակական գնահատականը տրվել է համաձայն «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջների՝ հիմնվելով 12 նմուշների լաբորատոր ֆիզիկամեխանիկական փորձարկումների, 4 նմուշների քիմիական անալիզի, միներալոգիական ուսումնասիրությունների, ինչպես նաև դաշտային պայմաններում ծավալազանգվածային որոշումների ու ճառագայթահիգիենիկ հետազոտությունների արդյունքների վրա: Ինչպես երևում է տվյալներից օգտակար հաստվածքի բեկորային նստվածքներում կոպիճի պարունակությունը չի գերազանցում է 7.0 %-ը՝ հասնելով մինչև 6.85 % (միջինը հանքավայրում 6.50 %), որոնք ըստ հատիկային կազմի «Ավազի և կոպիճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումների, վերագրվում են բնական ավազների խմբին: Հանքավայրի ավազներում վառարար խառնուկների պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանափակումները:



Ավագում բացակայում են օրգանական խառնուրդները, փայլարների և ածխի մասնիկները: Հիմքում լուծվող կայծքարի ամորֆ տարատեսակների միջին պարունակությունը կազմում է 37.0 % (չի գերազանցում սահմանային 50 միլիմոլ/լ քանակությունը): Ծծմբային միացությունները SO-ի վերահաշվարկված կազմում են 0.30 %, թույլատրելի 1% սահմանաքանակի դիմաց: Հանքավայրի օգտակար հաստվածքը ներկայացված է ավազների հորիզոնական տեղադրված 1.0-4.0 մ հզորությամբ շերտաձև մարմնով, որը բնութագրվում է բավական համասեռ կառուցվածքով և կայուն հատիկաչափական կազմով: Օգտակար հաստվածքը ծածկող ավազակավային ապարների հզորությունը տատանվում է 1.5-5.0 մ: Օգտակար հաստվածքը մասամբ ջրակալված է, իսկ ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով ավազները, նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին), գտնվում են խոնավ վիճակում: Օգտակար հանածոյի մակերեսային տեղադրումը թույլ է տալիս ավազի արդյունահանումը կատարել առանց նախնական փխրեցման, անմիջապես դրագլայնի միջոցով՝ նախապես բուլդոզերով հեռացնելով մակաբացման ավազակավերի շերտը: Օգտակար հաստվածքի ոչ մեծ հզորությունը թույլ է տալիս շահագործման աշխատանքները իրականացնել մեկ հանքաճակատով: Մակաբացման ապարները սկզբնական փուլում նախատեսվում է տեղադրել ժամանակավոր լցակույտերում, այնուհետև դրանք կտեղափոխվեն արդյունահանված տարածք, որը վերջնական փուլում կներկայացնի 252 մ x 206 մ չափերով, մոտ 3.0 մ խորությամբ ու կողերի 400 թեքությամբ ավազան: Ավազների բարձր ջրաթափանցելիությունը գերծ կպահի բացահանքը ջրողողումից, նույնիսկ գերնորմատիվ տեղումների դեպքում: Անձրևաջրերը կներծծվեն ու կանցնեն ջրաթափանց ավազներով, բեռնաթափվելով Սևջուր գետը: Նույնիսկ գրունտային ջրերի մասնակի ժամանակավոր բարձրացումը չի խոչնդոտի դրագլայնի միջոցով օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին: Այդ մասին են վկայում շրջանում տարիներ շարունակ գործող ավազի բացահանքերը: Հանքաշերտի բացումը նախատեսվում է կատարել բացահանքային դաշտի արևմտյան մասից: Մուտքային ավտոճանապարհի անցումը կատարել գոյություն ունեցող դեպի Ռանչպար բնակավայր գնացող գրունտային ավտոճանապարհից 232 մ երկարությամբ, թեքությունը 0% 6 մ լայնությամբ: Ավտոճանապարհի մակերեսն է՝ 1392 քմ (208 խմ), աշխատանքային հրապարակի կարգաբերում՝ 364 խմ: Կտրող խրամի երկարությունը՝ 49 մ, լայնությունը հիմքի մասում ընդունված է 2.0 մ, միջին խորությունը՝ 6.2 մ, կտրող խրամի անցումը նախատեսվում է կատարել JCB 245LR էքսկավատորի միջոցով: Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազի արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝ մոտեցող բնահողային ավտոճանապարհի կառուցում՝ կարգաբերում, ավտոճանապարհի երկարությունը՝ միջինը 232 մ, 6 մ լայնությամբ, հողային աշխատանքների քանակն է՝ 208 խմ (1390 քմ), աշխատանքային հրապարակի կարգաբերում՝ 364 խմ, արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 33 խմ (220 քմ), մակաբացման ապարների հեռացում՝ 750 խմ, օգտակար հանածոյի արդյունահանում՝ 570 խմ: Ավազի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել դեպի ներքև՝ շերտիման եղանակով, JCB 245LR էքսկավատորով: Քանի որ օգտակար հանածոն ծածկված է միջինը՝ 3.5 մ հզորությամբ մակաբացման ապարներով, սկզբում էքսկավատորով հեռացվում են մակաբացման ապարները, որից հետո կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրագրված օգտակար հանածոյի բարձրորակ կույտից՝ տրանսպորտային միջոցների մեջ: Հանքավայրը ծածկված է ավազակավերի շերտով



միջինը՝ 3.5 մ՝ 164.7 հազ.խմ ծավալով: Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրվել է ներքին լցակույտաառաջացում: Մակաբացման ապարների՝ 164 700 խմ ծավալի 7300 խմ-ը մնում է բացահանքի կողերում հանվում է 157400 խմ մակաբացման ապարները, օգտակար զանգվածը արդյունահանուց հետո նորից լցվելու է բացահանք:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

- |                                  |                                   |
|----------------------------------|-----------------------------------|
| 1. X- 4434920.000 Y-8444085.000  | 6. X- 4434691.856 Y- 8444296.923  |
| 2. X- 4434841.911 Y-8444068.973  | 7. X-4434785.023 Y - 8444300.934  |
| 3. X- 4434768.000 Y- 8444050.000 | 8. X- 4434885.000 Y -8444315.000  |
| 4. X- 4434700.000 Y- 8444139.000 | 9. X-4434893.563 Y - 8444236.412  |
| 5. X- 4434695.000 Y- 8444219.500 | 10. X- 4434906.730 Y -8444163.397 |

Համաձայն հաշվետվության տեղեկատվությամբ՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Արդյունահանման տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, մոտեցող ավտոճանապարհը ջրելու և բացահանքը տեխնիկական ջրով մատակարարելու նպատակով: Խմելու ջուրը նախատեսվում է բերել կցովի ջրի ցիստեռներով: Տեխնիկական ջուրը նախատեսվում է բերել KO- 713-01 (ZIL-431412) մակնիշի ջրցան ավտոմեքենայով: Զրոգտագործման նպատակով ընկերությունը ստացել է ԶԹ N 0117-23 և ԶԹ N0081- 23 Զրոգտագործման թույլտվությունները: Խմելու ջուրը կմատակարարվի «ԶԻ ԷՄ ՔՈՍՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Բացահանքում օգտակար հանածոյի արդյունահանման տեխնոլոգիաների հետ կապված առաջանում են վնասակար գազեր: Նախնական հաշվարկների համաձայն, բացահանքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ աղտոտված օդի արտանետումները շատ փոքր են և կապված են հիմնականում բացահանքի սահմաններում և սահմաններից դուրս ավտոճանապարհներին փոշեառաջացման հետ: Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ ջրային ռեսուրսները օգտագործվում են փոշենստեցման ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով: Ելնելով օգտակար հանածոյի նստվածքաշերտի ջրառատության պայմանից հանքավայրի շահագործման ժամանակ բացահանքին տեխնիկական ջրի մատակարարում հանքախորշը և նրան հարող ներհանքային ճանապարհները փոշենստեցման կարիք չունեն: Տեխնիկական ջուրը կպահանջվի բացահանքի սահմաններից դուրս՝ ավտոճանապարհները ջրելու համար: Հայցվող տարածքում երկար տարիներ գործել է ձկնարդյունաբերական կոմպլեքս, որի կառուցման ժամանակ տարածքի վերին շերտը՝ մոտ 0.3 մ խորությամբ, հանվել և օգտագործվել է ավազանների կառուցման և ձկնափորման նպատակով: Փաստացի հողի բերրի շերտը հանքավայրի տարածքում բացակայում է:

Բացահանքի շահագործման ժամանակ բնապահպանական միջոցառումների նախատեսվում են՝



- փոշենստեցման նպատակով՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում փոշեառաջացման օջախները, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը փոշեառաջացման օջախների սահմաններից դուրս,

- բացահանքի տարածքից մեքենաները ճանապարհ դուրս գալուց առաջ անվադողերը լվանալ,

- ավազի տեղափոխում փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

- Բուսական աշխարհի պահպանությունը իրականացնել ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 3-ի N781-Ն որոշման դրույթների համապատասխան՝ բուսական աշխարհի օբյեկտների դրանց աճելավայրերի պահպանությունով ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը: Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսվում է ծախսել 250000 ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ, համապարփակ գնահատման և մթնոլորտային օդի վիճակի կանխատեսման, ինչպես նաև հանրությանը մթնոլորտային օդի աղտոտման վերաբերյալ ընթացիկ և հրատապ տեղեկատվության տրամադրման նպատակով պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսների (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում



յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ, լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի N1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով բացահանքի, արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ, Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվելու է շրջակա միջավայրի նախարարություն:

**Պարճառարանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լսումներ: Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, Մասիսի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան արդյունահանման աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովվել համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:



- 3. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ կարևորելով փոշենստեցման աշխատանքները:
- 4. Օդի դրական ջերմաստիճանի դեպքում փոշենստեցումն իրականացնել պարբերաբար:
- 5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

**ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ**

«ՌԻԶԳԱԶ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Սիսի ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

*Handwritten signature*

Գոհար Մինասյան